

Հայտարարություն

Գավառի պետական համալսարանը հայտարարում է մրցույթ Կենսաբանության, Էկոլոգիայի և առողջ ապրելակերպի, Հաշվապահական հաշվառման, Հասարակական գիտությունների ամբիոնների վարիչների թափուր պաշտոնների համար: Մրցույթին կարող են մասնակցել ՀՀ չափահաս, գործունակ քաղաքացիները, որոնք ունեն ամբիոնի ուղղվածությանը համապատասխանող գիտական աստիճան և (կամ) գիտական կոչում: Թեկնածուները պարտավոր են ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

- դիմում ռեկտորի անունով,
- կադրերի հաշվառման անձնական թերթիկը,
- անձնագրի պատճեն,
- զինվորական գրքույկի պատճեն (առկայության դեպքում),
- քաղվածք աշխատանքային գրքույկից,
- ինքնակենսագրությունը,
- գիտական աստիճանը (գիտական կոչումը) հաստատող փաստաթղթերի վավերացված պատճենները,
- տպագրված գիտական և մեթոդական աշխատանքների հաստատված ցանկը,
- տվյալներ պարզևատրումների, մրցանակների և պատվավոր կոչումների վերաբերյալ (առկայության դեպքում),
- բնութագիր վերջին աշխատավայրից,
- ամբիոնի զարգացման և բարեփոխման հնգամյա հայեցակարգ:

Փաստաթղթերն ընդունվում են մինչև ս.թ.հունիսի 20-ը՝ ներառյալ, ժամը՝ 18.00-ն: Հասցե՝ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1, ԳՊՀ կենտրոնական մասնաշենք, 2-րդ հարկ, 217 սենյակ, հեռ. 060-46-02-01, 060-46-04-03: